

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հայտարարում է մրցույթ հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիրը՝ 61-3.3-12)

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, զեկուցման նյութերի և համապատասխան որոշման նախագծերի պատրաստման աշխատանքները.

- իրականացնում է Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր քառամյա ծրագրերի նախագծի կազմման աշխատանքները.

-իրականացնում է զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման, վարման և տեղեկատվական բազայի ստեղծման գործընթացներին մասնակցության ապահովման աշխատանքները.

-մասնակցում է մարզի զարգացման ծրագրի փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտային աշխատանքային խմբի աշխատանքներին.

-աջակցում է փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությանը .

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- տնտեսագիտություն(Էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 22-ը նոյեմբերի 2018թ. ներառյալ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները իսկականի հետ միասին.

- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

- անձնագիր

-դիպլոմ

-աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվի քաղվածք

- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին

- մեկ լուսանկար 3x4 սմ. չափսի:

Աշխատավարձը կազմում է 129. 600 դրամ (հարյուր քսանինը հազար վեց հարյուր) դրամ:

Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ,ժամը 10:00-ից մինչև 13:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով /0232/ 35383

Անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցեն՝ aragatsotn.andznakazm@ mta.gov.am